

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում նախատեսված «Կայուն տուրիզմի զարգացում և մարզամշակութային միջոցառումների կազմակերպում ու անցկացում» դասընթացի գործնական և լաբորատոր պարապմունքների բովանդակության մշակման համար անհատ-խորհրդատուի մրցույթ**

02 մայիսի 2018թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

*Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Կայուն տուրիզմի զարգացում և մարզամշակութային միջոցառումների կազմակերպում ու անցկացում» դասընթացի գործնական և լաբորատոր պարապմունքների բովանդակության մշակման համար անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթ:*

Անհատ-խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ի համապատասխան չափորոշային փաստաթղթերը, ինչպես նաև առկա և ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված նյութատեխնիկական բազան,

- «Կայուն տուրիզմի զարգացում ու մարզամշակութային միջոցառումների կազմակերպում և անցկացում» դասընթացի հայեցակարգային ծրագիրը,
- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ում ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված և իրականացված հեռաուսուցման դասընթացի կազմակերպման ու իրականացման գործընթացների հայեցակարգային ծրագիրը և ուսումնական նյութերը,
  - ✓ ուսումնական նյութերի մշակման աշխատանքներն իրականացնել՝ համագործակցելով բազմամասնագիտական թիմի մյուս խորհրդատուների հետ,
  - ✓ ուսումնասիրել «Կայուն տուրիզմի զարգացում ու մարզամշակութային միջոցառումների կազմակերպում և անցկացում» դասընթացի տեղական և միջազգային գործնական, լաբորատոր նյութեր,
  - ✓ համագործակցել դասընթացի որակի ապահովման մասնագետի հետ՝ 30 շաբաթուրդների կարիքների և կարողությունների ուսումնասիրման գործընթացում,
  - ✓ համագործակցել դասընթացի որակի ապահովման մասնագետի հետ՝ մասնակցելով դասընթացի արդյունավետության գնահատման աշխատանքներին,
  - ✓ մշակել «Կայուն տուրիզմի զարգացում ու մարզամշակութային միջոցառումների կազմակերպում և անցկացում» դասընթացի գործնական և լաբորատոր պարապմունքների բովանդակության նախնական տարբերակը,
  - ✓ վերանայել և բարելավել ուսումնական նյութերի գործնական և լաբորատոր պարապմունքների բովանդակությունը՝ նկատի առնելով շաբաթուրդների շրջանում դասընթացի որակի ապահովման մասնագետի մշտադիտարկման և ՇՊՀ-ի ղեկավար կազմի հետ քննարկման արդյունքները:

**Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.**

№	Անվանումը	Պահանջը	Միավորը
1.	Որակավորում	✓ Մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ:	20
2.	Ընդհանուր աշխատանքային փորձ	✓ դասավանդման փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/, ✓ անհատական և թիմային աշխատանքի	40

		փորձ, ✓ գովազդի և/կամ հասարակայնության հետ կապերի վերաբերյալ դասընթացի մասնակցությունը ցանկալի է:	
3.	<b>Հատուկ աշխատանքային փորձ</b>	✓ մասնագիտական դասընթաց(ներ)ի բովանդակության մշակման փորձ, ✓ գործնական և լաբորատոր պարապմունքների գիտելիքների ստուգման գործիքակազմի մշակման ու կիրառման փորձը ցանկալի է, ✓ ռուսերենի և անգլերենի իմացությունը ցանկալի է:	<b>40</b>
	<b>Ընդամենը՝</b>		<b>100</b>

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 3,5 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), [shirakhovhannisyan@mail.ru](mailto:shirakhovhannisyan@mail.ru), հեռախոս՝ 0312 2 84 69:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018 թվականի մայիսի 16-ը, ժամը 17:00 ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»  
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ \_\_\_\_\_

Հեռ. \_\_\_\_\_

Էլ. Փոստ \_\_\_\_\_

**Դիմում**

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

(ստորագրություն)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018 թ.